

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Նաիրա Զոհրաբյանի և Էլինար Վարդանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-189-24.12.2012-ՊԻ-010/0, Պ-189-24.12.2012-ՊԻ-010/0 և Պ-189²-24.12.2012-ՊԻ-010/0) վերաբերյալ:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Նախագիծը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Այսպես՝ նախագծի 2-րդ հոդվածով լրացվող Հայաստանի Հանրապետության
AJV-04-03_2013-01-31_01d10.1d1281-13_2013-01-31

թյան քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն՝ պատասխանատվության համաչափության սկզբունքին, քանի որ նախագծի ընդունման դեպքում ցմահ ազատազրկման դատապարտված և հանցանքը կատարելու պահին դատվածություն չունեցող անձը հնարավորություն է ստանալու պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել 10 տարի ազատազրկում կրելուց հետո, ինչն ակնհայտորեն կարճ ժամկետ է՝ արարքի ծանրության համեմատությամբ: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի սանկցիաների ուսումնասիրությունից բխում է, որ ցմահ ազատազրկում պատժատեսակը սահմանվում է ծանրացնող հանգամանքներում կատարված սպանության, պետական, քաղաքական, հասարակական գործչի սպանության և խաղաղության դեմ ուղղված հանցագործությունների համար:

Տվյալ հանցագործությունների համար, որպես կանոն, սահմանվում է պատիժ՝ 12-20 տարի ազատազրկում կամ ցմահ ազատազրկում, իսկ պայմանական վաղաժամկետ ազատման համար 10 տարի ժամկետ սահմանելու պարագայում ստացվում է, որ նման առանձնապես ծանր հանցագործություններ կատարած անձինք կարող են պատժից ավելի շուտ ազատվել, քան տվյալ հանցագործության համար սահմանված նվազագույն ժամկետը:

Հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածում առաջարկվող լրացումը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նշված հոդվածների պահանջներին:

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասում խմբագրվող՝ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 116-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությունը սահմանվում է, որ ցմահ ազատազրկման դատապարտված անձը կարող է ներկայացվել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման՝ նախորդող հինգ տարիների ընթացքում տույժ չունենալու և ազատազրկման ոչ պակաս, քան տասը տարին փաստացի կրելու պարագայում, սակայն, տույժ չունենալու հանգամանքն անձի դրական վարքագիծը և ուղղվելու փաստը հավաստող չափանիշներից միայն մեկն է: Որպես այլ չափանիշներ կարելի է նշել հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելը, տուժողի հետ հաշտվելը, պատիժը կրելու ընթացքում ավելի բարձր կրթական մակարդակ ստանալը և այլն: Ներկայումս Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից մշակվել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու չափանիշները և ընթացակարգերը սահմանող նախագիծ, որում համապատասխան չափանիշների քանակը գերազանցում է 25-ը: Գտնում ենք, որ դրանցից միայն մեկի արժևորումն անընդունելի է:

«Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Նախագիծը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի՝ նկատի ունենալով, որ նախագծի համաձայն հանվել են «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության դատախազության կողմից հաստատված ցանկերին վերաբերող դրույթները, ինչը կարող է հանգեցնել համապատասխան նորմերի կիրառման տարաբնույթ մեկնաբանությունների:

Միաժամանակ օրենքի գործող նորմը սահմանված է այն տրամաբանությամբ, որ ծանր կամ առնվազն երկու անգամ դիտավորյալ հանցագործության համար ազատազրկման

վայրում երեք տարվանից ոչ պակաս ժամկետով պատիժ կրած անձի կողմից բացասական բարքեր ունենալու հավանականությունը մեծ է, որի պարագայում նշված անձը զինվորական ծառայության մեջ կարող է հանդիսանալ հանցածին բարքերի կրող կամ տարածող: Այս առումով գտնում ենք, որ պատիժը կրելու ընթացքում անձի կողմից քրեորեն հետապնդելի այլ արարքների չկատարելը բավարար հիմք չէ նշված տրամաբանությունը բացառելու համար:

Նախագծերի փաթեթում օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն:

Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրության 1-ին կետով հաստատված հավելվածի 4-րդ գլխի պահանջների համաձայն նախատեսվում է քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով իրականացնել մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի մշակում: Այդ առումով գտնում ենք, որ նախագծերի ընդունումը ժամանակավրեպ է, քանի որ նախագծերում բարձրացված հարցերը պահանջում են հիմնարար ուսումնասիրություններ, համալիր լուծումներ և պետք է համապատասխանեն մշակվող նախագծերի հայեցակարգային մոտեցումներին:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմայանը:

Օրենքների ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի /այսուհետ՝ նախագծեր/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն,**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **դրական ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զինապարտության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զինապարտության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է ցմահ ազատազրկման դատապարտված անձանց առնչվող իրավահարաբերություններին* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն **չի նախատեսվում**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) նախատեսվում է ցմահ ազատազրկման դատապարտված անձանց և անչափահաս դատապարտյալների իրավական վիճակի փոփոխություն:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

**ՀԱՎԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ
և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության
քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և
«Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների
նախագծերի վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1.«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների (այսուհետ՝ օրենքներ) նախագծերի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքները բնապահպանության ոլորտին չեն առնչվում և այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունումը և կամ չընդունումը բյուջետային բնագավառում թե մուտքերի և թե ելքերի գծով կարգավորման ազդեցության չի հանգեցնում:

Պ-189-24.12.2012-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 60-րդ հոդվածի 2-րդ մասում «տասնույթ» բառը փոխարինել «քսանմեկ» բառով:

Հոդված 2. Օրենսգրքի 76-րդ հոդվածում՝

1.5-րդ մասում «քսան» բառը փոխարինել «տասնհինգ» բառով,

2. լրացնել նոր նախադասությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«Ցմահ ազատազրկման ձեռով պատիժ կրող այն անձը, որը հանցանքը կատարելու ժամանակ դատվածություն չի ունեցել, կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե փաստացի կրել է ազատազրկման ոչ պակաս, քան տասը տարին եւ դատավճռով պատիժը հետագա կրելու կարիքը չունի»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Պ-189՝-24.12.2012-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 24-ի քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 102-րդ հոդվածում՝

1.2-րդ մասի դ) կետում «քսանհինգ» բառը փոխարինել «տասնհինգ» բառով,

2. 3-րդ մասի բ) կետում «քսան» բառերը փոխարինել «տասը» բառով,

Հոդված 2. Օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2.Տասնույթ տարին լրացած դատապարտյալի՝ առնվազն պատժի չափի մեկ երկրորդի ընթացքում պատիժը կրելու սահմանված կարգի չարամիտ խախտումների համար սույն ունենալու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված առանձնահատկությունը չի գործում»:

Հողված 3 . Օրենսգրքի 116-րդ հոդվածում՝

1.1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Ցմահ ազատագրկման դատապարտված անձը կարող է ներկայացվել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման նախորդ հինգ տարիների ընթացքում պատիժը կրելու սահմանված կարգի չարամիտ խախտումների համար տույժ չունենալու դեպքում՝ ազատագրկման ոչ պակաս, քան տասնհինգ տարին կրելուց հետո:

Ցմահ ազատագրկման ձեով պատիժ կրող այն անձը, որը հանցանքը կատարելու ժամանակ դատվածություն չի ունեցել եւ հինգ տարիների ընթացքում պատիժը կրելու սահմանված կարգի չարամիտ խախտումների համար տույժ չունի, կարող է պայմանական վաղաժամկետ ազատվել, եթե փաստացի կրել է ազատագրկման ոչ պակաս, քան տասը տարին եւ դատավճռով պատիժը հետագա կրելու կարիքը չունի»:

2. 2-րդ մասում՝

1) «մեկուկես տարի» բառերը փոխարինել «ինն ամիս» բառերով,

2) 2-րդ նախադասության մեջ «երեք տարի» բառերը փոխարինել «մեկուկես տարի» բառերով:

Հողված 5 . Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-189²-24.12.2012-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հողված 1. «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի սեպտեմբերի 16-ի ՀՕ-250 օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու ենթակա չեն այն անձինք, որոնց նկատմամբ կատարվում է հետաքննություն (նախաքննություն, դատաքննություն) կամ ովքեր նախկինում դատապարտվել են ազատագրկման՝ ծանր կամ առնվազն երկու անգամ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, ազատագրկման վայրում պատիժը կրել են երեք տարուց ոչ պակաս եւ այդ ընթացքում չեն կատարել քրեորեն հետապնդելի այլ արարք»:

Հողված 2 . Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Իրավական ակտերի անհրաժեշտությունը (նպատակը). Նախագծերի փաթեթի նպատակը ՀՀ քրեական օրենսգրքի, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի, «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի կիրառության ընթացքում առաջ եկած խնդիրների լուծումն է:

2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը եւ առկա խնդիրները. Ներկայումս Հայաստանի 104 ցմահ դատապարտյալներից 22-ը ցմահ դատապարտվել են մինչեւ 21 տարին լրանալը, որոնցից 15-ը զինվորական ծառայության ժամանակ կատարած հանցանքների համար: Մինչդեռ, չնայած այն հանգամանքին, որ, օրինակ, Ավստրիայում եւ Շվեդիայում անձը համարվում է չափահաս 18 տարեկանը լրանալուն պես, այդուհանդերձ, եթե հանցանքը կատարելու պահին լրացած չի եղել անձի 21 տարին, օրենքով արգելվում է նրան ցմահ դատապարտել, քանի որ համարվում է, որ անձը լիարժեք ձեւավորված չէ:

Պայմանական վաղաժամկետ ազատ արձակման պայմանները /շեմը/ պետք է դարձնել ճկուն՝ հաշվի առնելով ցմահ դատապարտյալի դատվածությունների քանակը, հանցանքի ծանրությունը եւ այլն: Օրինակ՝ պայմանական վաղաժամկետ ազատ արձակման պայմաններից մեկը՝ 20-ի փոխարեն դարձնել 10 տարի, եթե օրինակ անձը նախկինում դատվածություն չի ունեցել եւ առաջին անգամ դատապարտվել է ցմահ ազատազրկման (օրինակ՝ Բելգիայում, եթե առաջին դատվածությամբ է անձը ցմահ դատապարտվել, ապա դարձյալ 10 տարի անց կարող է դիմել պայմանական վաղաժամկետ ազատարձակման համար, իսկ բազմակի դատվածության պարագայում՝ 20 տարի անց), իսկ երկու եւ ավելի դատվածություն ունեցող ցմահ ազատազրկման դատապարտվածների պայմանական վաղաժամկետ ազատման շեմը 20 տարուց իջեցնել 15-ի: Հետեւաբար, առաջանում է անհրաժեշտություն նույն հիմքով փոփոխել նաեւ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի համապատասխան 116 հոդվածը, համապատասխանեցնելով ՀՀ քրեական օրենսգրքի 76 հոդվածի փոփոխությանը:

Ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ անկախ հանձնաժողովին միջնորդագիր ներկայացնել մերժման որոշումը կայացվելուց հետո կրկին անգամ դիմելու ժամկետների կրճատումը կնպաստի դատապարտյալի ավելի արագ ուղղմանը: Դատապարտյալը գիտակցելով, որ լավ վարքագիծը եւ տույժերի բացակայությունը դրվում է նրա վաղաժամկետ ազատման հիմքում շահագրգռված կլինի ավելի պարկեշտ վարքագիծ դրսևորելուն եւ ուղղվելուն:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր՝ խոշտանգումների կանխարգելման փորձագիտական խորհրդի կողմից իրականացված մշտադիտարկումների եւ այցելությունների արդյունքում գրանցվել են դեպքեր, երբ դատապարտված անձինք, ովքեր դեռեւս գտնվել են զորակոչային տարիքում սակայն 3 տարուց պակաս

ազատագրկման են դատապարտվել, պատիժը կրելու ընթացքում կատարել են քրեորեն հետապնդելի այլ արարքներ որպեսզի ենթակա չլինեն պարտադիր զինվորական ծառայության զորակոչմանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ցմահ ազատագրկված դատապարտյալները պահվում են փակ ռեժիմում, այսինքն 23 ժամ գտնվում են խցերում եւ չունեն որեւէ զբաղվածություն, որի հետեւանքով նրանք ավելի են մեկուսանում, ինչը չի նպաստում նրանց ուղղմանը առաջարկվում է օրենքում վերանայել ցմահ ազատագրկման դատապարտված անձանց ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու կարգը եւ կյանքի կոչել նրանց պահման ռեժիմների փոփոխման համակարգը՝ փակից անցում կիսափակի, հետո նաեւ՝ կիսաբացի /ելնելով դատվածությունների քանակից ու սպանությունների քանակից, հաշվի առնելով նաեւ անձի վարքագիծը եւ տույժերի քանակը կամ դրանց բացակայությունը/, ինչպես արվում է եվրոպական մի շարք երկրներում: Օրինակ՝ Իտալիայում ցմահ դատապարտյալը կարող է անցնել ցերեկային աշխատանքի բանտի սահմաններից դուրս, նաեւ ստանալ տարեկան 45- օրյա արձակուրդի իրավունք, եթե 8 տարի լավ վարք է դրսևորել, իսկ, օրինակ, Անգլիայում փոխվում են ցմահ դատապարտյալների պահման ռեժիմները՝ ընդհուպ անցնելով բաց ռեժիմի, ըստ դատապարտյալի անհատական սխեմայի: Լավ արդյունքներ ունեցող դատապարտյալները հսկողության տակ վերադառնում են հասարակություն փորձաշրջանի: Պրակտիկան ցույց է տալիս, որ այս խմբի մոտ կրկնահանցագործությունների ամենացածր տոկոսն է:

Ներկայումս պայմանական վաղաժամկետի շեմը՝ 20 տարին, հատած ցմահ դատապարտյալներին չեն ներկայացնում վաղալետ ազատման՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ քաղ.հայցերով պարտքերը մարված չեն: Այնինչ 20 տարի շարունակ ցմահ դատապարտյալներն աշխատանքով ապահովված չեն եղել, ավելին՝ եղել են պետական խնամքի ներքո:

2011թ. մայիսի 25-ին ուժի մեջ մտավ ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը: Հիշյալ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի մեջ կատարվեց փոփոխություն, ըստ որի՝ որոշակի ժամկետով ազատագրկման առավելագույն պատժաչափը սահմանվեց 20 տարի՝ նախկինում սահմանված 15 տարվա փոխարեն: Քրեական օրենսգրքի վերոնշյալ փոփոխություններից հետո դատապարտվելու դեպքում պատիժն արդեն կրող ցմահ ազատագրկման դատապարտված անձանցից որոշների համար ցմահ ազատագրկումը կարող էր չսահմանվել որպես պատիժ: Այսինքն, ցմահ ազատագրկվածների դեպքում օրենքի դրույթի այդ փոփոխությունը մեղմացնող է եւ այն պետք է ունենա հետադարձ ուժ: Մինչդեռ 97 ցմահ դատապարտյալներ այս փոփոխությունների հիմքով 2011 թվականին դիմեցին դատարան, սակայն հոդվածների համապատասխանեցումից հետո պատժաչափերը մնացին անփոփոխ: Օրինակ՝ 1997թ. Վրաստանում 57 մահապատժականների շնորհվեց ներում եւ նշանակվեց 20 տարվա ազատագրկում:

3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Նախագծերի փաթեթով առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարել եւ ցմահ ազատագրկման տարիքային շեմը 18-ից դարձնել 21: Վերոնշյալ հարցերից մեկի լուծումը կապված է ցմահ ազատագրկված անձանց աշխատանքով ապահովելու մեջ, իսկ այն անձանց դեպքում, ովքեր հատել են 20 տարվա շեմը, հնարավորություն տրվի թեկուզ ազատ արձակվելուց հետո հատուկ ծրագրով աշխատել եւ պահումների ձեռք փոխհատուցել պարտավորությունները: Ցմահ ազատագրկման դատապարտված անձին

պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ անկախ հանձնաժողովին միջնորդագիր ներկայացնել մերժման որոշումը կայացվելուց ոչ թե մեկուկես տարի /18 ամիս / անց, ինչը նախատեսված է գործող օրենսդրությամբ, այլ 9 ամիս անց կրկին դիմելու իրավունք սահմանվի: Փոփոխել նաեւ դատարանի կողմից մերժելու դեպքում 3 տարին մեկուկես տարվա: Առաջարկվում է նաեւ ՀՀ քրեակատարողական օրենսգրքով նախատեսված ցմահ ազատազրկման դատապարտվածների դեպքում կիսափակ տեսակին անցնելու 20 տարին փոփոխել եւ սահմանել 10 տարի, իսկ կիսաբացի անցնելու 25 տարվա փոխարեն 15 տարի: Հաշվի առնելով քրեական օրենսգրքում 2011թ. մայիսի 25-ի համապատասխան փոփոխությունը, անհրաժեշտ է ուսումնասիրել բոլոր ցմահ դատապարտված անձանց վերաբերյալ կայացված օրինական ուժի մեջ մտած դատավճիռների պատժաչափերի վերանայման վերաբերյալ ներկայացված դիմումներն ու դրանց վերաբերյալ կայացված դատարանի որոշումները:

Առաջարկվում է նաեւ, որ լրացում կատարվի «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու ենթակա չեն այն անձինք... ազատազրկման վայրում պատիժը կրել են 3 տարուց ոչ պակաս եւ այդ ընթացքում չեն կատարել քրեորեն հետապնդելի այլ արարքներ»: Նշված առաջարկությամբ հնարավոր կլինի կանխարգելել պարտադիր զինվորական ծառայության ենթակա պատիժը կրող անձանց կողմից՝ ծառայությունից խուսափելու համար կրկին անգամ հանցագործությունների կատարումը եւ միաժամանակ կնպաստի պատժի նշանակման նպատակների բավարարմանը:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները եւ անձինք. Նախագիծը մշակվել է ՀՀ ԱԺ պատգամավորներ Նաիրա Զոհրաբյանի, Էլինար Վարդանյանի, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավական վերլուծության վարչության կողմից՝ մասնագետ-փորձագետների մասնակցությամբ:

5. Կարգավորման առարկան. ՀՀ քրեական օրենսգրքի, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի, «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի կիրառության ընթացքում ցմահ դատապարտյալների եւ անչափահաս դատապարտյալների իրավունքների պատշապանության ոլորտում վերհանված խնդիրների կարգավորումն է:

6. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը. Նախագծերի փաթեթի ընդունման արդյունքում ակնկալվում է բարելավել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց եւ անչափահաս դատապարտյալների իրավական վիճակը: